ԽՍՀՄ-ում վերջին տարիների ընթացքում կապիտալիստա-կան գասակարգերը վերջնականապես լիկվիդացիայի յեն յեն-թարկվել, ինչպես վոր ավելի առաջ լիկվիդացիայի յեր յենթարկ-թարկվել, ինչպես վոր ավելի առաջ լիկվիդացիայի յեր յենթարկ-թարկվել: Վահանազրության 4-րդ հոդվածում ցիվածի Ստալինյան Սահմանադրության 4-րդ հոդվածում ցանագոր-դրված կատարված փաստի՝ «մարդու կողմից մարդուն շահագոր-ծելու վոչնչացման» մասին:

Կապիտալիստներն ու կալվածատերերը ազգաբնակության հակայական մասսաներին ճնշում եյին, իրենց ձեռքը ուսնելով Փարբեկաները, հողերը, բանկերը, տրանսպորտը:

Հոկտեմբերյան պրոլետարական հեղափոխությունը և սո-ցիալիզմի հաղթանակը հասցըին մասնավոր սեփականության վերացման: Մեր Սահմանադրության 6-րդ հոդվածում ասված ե. «Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, ֆաբ-րիկաները, հանքանորերը, հանքերը, յերկաթուղային, ջրային ու ոդային արանսպորտը, բանկերը, կապի միջոցները, պետության կազմակերպած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները (խորհուտեսությունները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկությունները և հիմնա-կան բնակարանային ֆոնդը քաղաքներում ու արդյունաբերա-կան կետերում, հանդիսանում են պետական սեփականություն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածքներ:

Վորքան ծանր եր աշխատավոր գյուղացիների վիճակը մեր մինչեղափոխական յերկում, յերբ ամենալավ հողը պատկա-նում եր կալվածատերերին, կուլակներին, ցարին և զանձարա-նին, վանքերին ու յեկեղեցիներին, իսկ գյուղացիներն ունեյին միայն ուժասպառ հողի վողորմելի շերտիկներ:

Վորքան ծանր եր նրանց վիճակն առանց մեքենաների, քիմիական պարարտանյութերի և լավ սերմերի (հաճախ ցանքի համար սերմ ամենակին չեր լինում), առանց լծկան անասունների կամ վատագույն ձիով:

Ինչպիսի տանջալից կախման վիճակում եր գանվում բան-վորը կապիտալիստից, վորը վոչ մի հոգեպահուսա չուներ, բացի իր բանվական ուժը, այն ժամանակ, յերբ Փարբիկանութ վոր-պես անձնական սեփականություն ուներ գործարանային կոր-պուսներ, մեքենաներ, հումք, վասելիք, փող:

Հիմա արտադրության բոլոր հիմնական միջոցները գառել են համաժողովրդական ունեցվածքներ: Հողը կալվածատերերի, կուլ-կ-ների և մակարույժ վանականների ձեռքից խրված եւ այս մշա-կում են սովորողները, կոլխոզներն ու մենատնտես աշխատավոր-ները, ընդունում հողը, վոր զբաղեցնում են կոլխոզները, ամ-բացվում եւ նրանց առհավետ և ձրի ոգտագործելու համար, ինչ-պես ասված ե մեր Սահմանադրության մեջ:

Շահագործող գասակարգերի լիկվիդացիան մահացու հար-գած հասցըրեց կրոնին: Մենք տեսնում ենք մեր ամբողջ ժողո-վորդի կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի հսկա-

յական աճը: Կրոնը—ճնշված արարածների հառաջանքն է, բայց ԽՍՀՄ-ում չկա դասակարգային ճնշում, չկա շահագործում, չկան ճնշվածներ:

Կապիտալիստական աշխարհում միլիոնավոր մարդիկ, վորոնք կարող են լավ աշխատել և վորոնք տեսչում են գեթ վորեւ աշխատանք, անգործ նստած են, իսկ ԽՍՀՄ-ում գործազրբեկությունն իսպառ վերացված է, և ստավինյան Սահմանադրության 118 հոդ. համաձայն՝ «ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ յերաշխափորված աշխատանք ստանալու իրավունք, ըստվորում նրանց աշխատանքը պետք է վարձատրվի նրա քանակի ու վորակի համաձայն»:

Կապիտալիստական յերկրներում յեկեղեցու մեջ են փընտոյքմ մոռացում և միիթարություն այն աշխատավորները, վորոնք իրենց ամրողջ կյանքում մեջքները ծոռւմ են չափաղանց ծանր աշխատանքի տակ, փոքր հասակից (հաճակի 6—12 տարեկան) մինչև խորին ծերություն, առանց հանգստանալու և առանց ժամկետի, առանց յերաշխափորված արձակուրդների, և ամենուրեք առանց շաբաթական արձակուրդային որերի. «ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք» (հոդ. 119), իսկ հանգըստի համար ԽՍՀՄ-ում հնարավորություններ ստեղծված են 7. ժամյա բանվորական որ, ամեն մի վեցերորդ որը—հանդիսա, տարեկան արձակուրդներ բանվորներին և ծառայողներին՝ աշխատավարձի պահպանմամբ, սանատորիաներ, հանգստի տներ ակումբներ:

Կապիտալիստական պետություններում բանվորը, յեթե նա աշխատունակությունը կորցրել է, անցնում է իր վորդիների խնամքի տակ, վորոնք ևնց իրենք իսկ ուտելու վոչինչ չունեն, և աստվածային տաճարների հավատացյալների մեջքիչ չեն հենց այնպիսի բանվորները, վորոնց կապիտալիզմը զրկել է դոյցության միջոցներից:

Այստեղ, շահագործման աշխարհում, ծերությունն աշխատավորների համար—մեծ փորձանք, անբախտություն է: Գործարաններում 40—50 տարեկան բանվորը չի կարողանում հասնել յերիտասարդ բանվորին, և նրան վանդում են, բացարձակեցն զրկում են ապրելու միջոցներից:

Իսկ Ստավինյան Սահմանադրության 120-րդ հոդվածում

ասված է. «ԽՍՀՄ-ի քաղաքացիները նյութական ապահովության իրավունք ունեն ծերության, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու գեղքում»:

Կապիտալիզմի յերկրներում աշխատավոր դասակարգերի ծերունիները խնդրում են աստծուն շուտափույթ մահ ուղարկել, իսկ ԽՍՀՄ-ում՝ ծերունիներն ուզում են ապրել վորովհետեւ սուցիալիզմի յերկրում ապրելու ուրախ ե, և կյանքը վոչ վոքէ համար ծանրություն չե:

Շահագործման աշխարհում կրթությունը վազուց իվեր արդին դարձել է շահագործողների մենաշնորհը:

Միթե բուրժուական յերկրներում քիչ հայրեր ու մայրեր կան, վորոնք աղոթում են աստծուն, վորպեսզի իրենց յերեխաներին հաջողվի կրթության ստանալ Բայց և այս աղոթքները ինչպես և բոլոր մյուսները՝ անպտուզ են, և կապիտալիզմը միջակ և բարձրագույն կրթությամբ ապահովում է համարյա բացառապես հարուստ մարդկանց:

«ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն կրթության իրավունք»,— ողբարարում և հաղթանակած սոցիալիզմի Սահմանադրության 121-րդ հոդվածը ԽՍՀՄ-ում տարբական կրթությունը պարտադիր և բոլոր յերեխաների համար, ուսման համար վարձ չե գանձագում, ուսանողները ճնշող մեծամասնությամբ թոշակ են ստագում, գասավանդությունը տարվում է մայրենի լեզվով, գործարաններում, սովորողներում, կրթուներում, ՄՃԿ-ներում աշխատավորների համար կազմակերպվում ե արտադրական տեխնիկական և գյուղատնտեսական ձրի ուսուցում:

122-րդ հոդվածում խոսվում է կանանց՝ տղամարդկանց հետ հավասար իրավունքների մասին: Յևլի իսկապես, ԽՍՀՄ-ն աշխատաւում միակ յերկիրն է, ուր կինը տղամարդուն հավասար իրավունքներ ունի և չի յենթարկվում նրան, ուր «կանանց այդ իրավունքների իրականացման հարցավորությունն ապահովվում է կողմը տղամարդուն հավասար իրավունք տալով՝ աշխատանքի վարձատրության, հանգստի, սոցիալական ապահովության ու կրթության ասպարեզում, մոր և մանկան շահերի պետական պահպանությամբ, կողմը հղիության ժամանակաշխատավարձի պահպանմամբ, արձակուրդ տալով՝ ծննդատներ:

թի, մանկամուրների ու մանկապարտեղների լայն ցանցով։  
**ԽՍՀՄ Սահմանադրության 122-րդ հոդվածից**:

Կապիտալիստական յերկրներում պրոլետարական ընտանիքի անդամ կինը, վորն աշխատում և փարձով, կամ ֆաքտիկայում, կամ որավարձու աշխատանքում, յենթարկվում և մտանալոր ձևանարկատիրոջ կամայականություններին և ծաղրանքներին։ Նրա աշխատանքը վճարվում և զգալիորեն ցածր, քան տղամարդու աշխատանքը։

Հենբնը գրել է. «... մտրդկային ցեղի կանացի կեսը կապիտալիզմի որով կը կնապատիկ ճնշված եւ: Աշխատավորուհին և գեղջկուհին կապիտալից ճնշված են, և բացի այդ, նրանք նույնիսկ բութուական հանրապետություններից ամենաշեմուկառականումն եւ մուռ են՝ տառաջին՝ վոչ լիրավ, վորովիետե որենքը աղամարդու հետ հավասարություն չի տալիս նրանց, յերկրորդ՝ և այս գլխավորն եւ՝ նրանք մուռ են՝ «տնային ստրկության մեջ», «տնային ստրկութիները, ճնշված լինելով ամենամանը, ամենասև, ամենածանր, մարզուն ամենից շատ քթացնող խոհանոցային աշխատանքով և ընդհանրապես մենավոր տնային ընտանիքան անտեսությամբ»<sup>1)</sup>):

Դաստկարգային, շահագործող հաստրակության մեջ բավական յերգեր են շարահյուսված կանանց ծանր ճակատագրի մասին։ Զարմանալի չե, վոր կանայք, ընդհանուր առմամբ վերցրած, միշտ ավելի իրոնասեր են յեղեւ քան տղամարդիկ։

«Հայրն» ու «յեղբայրները» զուր չե, վոր այնքան հաճույքով իրենց եղահամբույր զբույցներով զնում են հենց կնոջ մոտե Շահագործող հաստրակության մեջ աշխատավոր կինն ամենաճշված տրարածն ե, յեթե միայն նա քաղաքականապես չի հասուացել և շահագործողների զեմ չի սկսել պայքարել։

ԽՍՀՄ-ում, յեթե կինը տղամարդուց վատ չի աշխատում, նա և նրանից պակասչի ստանում, իսկ վորպեսզի լավ աշխատի, նա կարող եւ դպրոցում սովորել, և տեխնիկումում, և՝ ԲՈՒՀ-ում, և կոլիսողում, և՝ ֆաքտիկայում։

Բութուական պետություններում կինը, վորպես մայք, յեթե անգամ ոգտվում և հարգանքով, տղամբայն առերես, կեղծ հարգանքով, իսկ ԽՍՀՄ-ում այդ հարգանքն իսկական և,

<sup>1)</sup> Ենքն, Յերկեր, և. XXVI, եջ 108.

խնամքը՝ իրական, հզի և ծննդկան կանայք ոգտվում են արձակություններով, աճում և ծննդատների ցանցը, մայրերն ապահովված են կոնսուլտացիաներով, այժմ նրանց համար ստեղծվում են հանգստի տներ, յերեխաների համար կազմակերպված են մսուրներ, պարտեզներ, պիոներական լագերներ և այլն։

Դրա համար ել զարմանալի վոչինչ չկա այն բանում, վոր ԽՍՀՄ-ում կանանց մեջ անսամվածությունը շատ տրագ կերպով աճում եւ։

Հետո. Միթե ազգային ճնշումը չի նպաստում կրոնին, յերբ, որինակ, ճապոնացի իմպերիալիստները ճնշում են կորեացիներին և չինացիներին, անգլիացի իմպերիալիստները — հնդիկներին, իտալացի իմպերիալիստները — հարեցներին, գերմանական իմպերիալիստները — լեհերին և ուրիշ ժողովուրդներին, վորոնք ապրում են Գերմանիայում։

Մասն եր աշխատավոր ուզբեկի համար, յերբ ճնշում եր նրան ուզբեկ-կուլտակը կամ ուզբեկ-ֆեռզալը, բայց ել ավելի ծանր եր, յերբ նրան միանգամից ճնշում եյին և ուզբեկ-շաւհագործողը, և ուռւ շահագործողը, ինչպես վոր այդ տեղի յեր ունենում նախահեղափոխական նուսասաւանում։

Աշխարհում չկա վոչ մի իմպերիալիստական յերկիր, ուր ճնշված ժողովուրդներ չինեն։

ԽՍՀՄ-ում մոտավորամես հարյուրհիսուն ժողովուրդներ կան, վոր նաքանագործան ճնշումից և ազգային հարստանարումից ընդմիշտ ազատավել են։ Լենինիցան-ստալինյան ազգային քաղաքականությունն ապահովել և նրանց՝ ձևով ազգային, բուժվանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի հուժկու զարգացումը։ ԽՍՀՄ-ի ժողովուրդներն ապրում են համերաշխ, վարությունուն լինինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը իրար և միաձուլում ժողովուրդների այս զարմանալի ընտանիքը։

Ստալինյան Սահմանադրության 123-րդ հոդվածում մենք կարդում ենք հետեւյալ ուշագրավ խոսքերը. «Իրավունքների վորեկցե ուզգակի կամ անուղղակի սահմանափակումը, կամ ընդհակառակը, ցեղական և ազգային պատկանակիլիությունից յելնելով՝ քաղաքացիների համար ուզգակի կամ անուղղակի առավելություններ սահմանելը, ինչպես նաև ցեղական ու ազգային քացանակության կամ ատելության ու արհամարհանքի ամեն

տեսակ քարող—պատժվում են որևէնքով»: Այսպիսով, ազգայիշահարաբերությունների միջավայրում ևս կը ո՞նին հասցված է խստագույն հարված:

Կապիտալիզմի որոք ազգարնակության ձնշող մեծամասնության նյութական դրությունը չափաղանց ծանր է, իսկ կրոնը, վորը հորդորում է համբերել և հաշտվել յեռանդուն կերպով պաշտպանում և շահագործող դասակարգերին, ամրապնդելով ժողովրդական մասսաների կարիքն ու աղքատությունը:

Իսկ ԽՍՀՄ-ում, ընդհակառակը, աշխատավորների կյանքի պայմանները շարունակ լավանում են:

Առաջին հնգամյակում ԽՍՀՄ-ում ստեղծվեցին արդյունաբերության կարևորագույն նոր ճյուղերը, շինվեցին ուժեղ գործարաններ, իրագործվեց ջրավոր և միջտկ անտեսությունների մասսայական կոլեկտիվացությունը, ծագալ Եց ՄՏԿ-ների և սովորողների լայն շինարարությունը, ծաղկեց գյուղատնտեսական մեքենաշինարարությունը և քիմիական պարարտանյութերի արդյունաբերությունը:

Տնտեսական գարմտնալի աճը հատուկ է նաև յերկրորդ հնգամյակին, վորը նշանափոր է վոչ միայն նոր շինարարությամբ, այլև տեխնիկայի յուրացմամբ, ստախանովյան հրաշալի շարժմամբ, մեծ քանակությամբ կոլտնտեսական գորակյալ բանվորների և կոլտնտեսականների, տեխնիկների, ինժեներների, գյուղատնտեսների, բժիշկների, ուսուցիչների կազրերի ստեղծմամբ:

Աշխատավարձն անշեղորեն և արագ աճում է, ընդլուրում գործածվող առարկաների շուկայական գն ըլ նույնպիսի անշեղությամբ ընկնում են: Գյուղում արդեն վոչ ձի չունեցող, վոչ ել հող չունեցող գյուղացիներ չկան, չկան նաև գործազրկության և աղքատության թեկնածուներ. աղքատության պատճառները մեղանում ընդմիջու վերացված են: Կոլտնտեսությունների յերազուաներն աճում են:

Հենինի—Ստալինի կուսակցության գեկավարությամբ կոլտնտեսական կյանքը դարձավ ունեոր, կոլտնտեսականների նյութական և կուլտուրական մակարդակը յուրաքանչյուր տարի աճում է, յերկրագործությունն ու անսանապահությունն արտգորեն բարձրանում էն, և 1937 թվին հավաքած հացահատիկը նախնական տվյալներով՝ 6,8 միլիարդ փութ և կազմում: Ընկեր

Ստալինի դիրեկտիվը՝ մոտակա ժամանակներում 7—8 միլիարդ փութ հացահատիկ հավաքելու մասին՝ կենսագործվում է: Անասունների խնդիրը դժվար էր. կուտակներն անսառւնները մորթուտում ենին, պրովակացիայի յենթարկելով նաև միջակներին նույննանելու: Բայց ահա յերբորդ տարին է, վոր անաստանների ընդհանուր գանակը, վոչ միայն մասրերինը, այլև խոշորինը վոչ միայն յեղջուրավորներինը, այլև ձիերինը՝ ավելանուած:

Եթե սոցիալիստական հայրենիքի 170 միլիոնանոց ժողովուրդն ավելի լավ ունվում է և ավելի լավ հագնվում: Աճում է ամուր, առողջ յերիտասարդություն՝ Յուրաքանչյուր տարի պարզվում է, վոր Կարմիր Բանակ կանչված յերիտասարդությունն իր առողջությամբ ավելի ամրապնդ: Կյանքի նյութական մակարդակի մասին շատ համոզեցուցիչ կերպով խոսում ե 1932 թ. մինչև 1936 թ. ժամանակաշրջանում մանրածախառնությունը գրեթե յերեք անգամ մեծանալը:

Ֆաշիստական Գերմանիայում առևտուրը պակասում է, և ամբողջ աշխարհը զիտե, վոր միլիոնավոր ճնշված գերմանացիներ ապրում են առանց յուղի և ճարպի, իսկ հաճախ ել առանց հացի: Այնուեղ արյան պակասությունն ու թոքախտը հնձում են ժողովրդական մասսաներին:

Հուսահատությունն ու ինքնասպանությունները—ֆաշիստական Գերմանիայում, ինչպես և ֆաշիստական ծապոնիայում և իտալիայում, կիսցաղային յերկույթներ են:

Իսկ ԽՍՀՄ-ում, ընդհակառակը, ապրելու ցանկությունն որեցոր աճում է, կյանքն ավելի ու ավելի ուրախ ու զվարթ և զառնում, իսկ տերտերներն ու աղանդավորական ղեկավարները զրանից վոչ ուրախ են, վոչ ել զվարթ:

Բայց ինչու, այդ գեղքում, մեր յերկրում գեռես բավական մարդիկ հավատում են առածուն, գնում են յեկեղեցի, կատարում են կրոնական արարողություններ, տոնում են տոնները և իրենց աշխատավորական ուռւլիներով պահում են պարագիտների մի ամբողջ բանակ—քահանաներին, յեկեղեցական հսկիչներին, յերդիչներին և այլն: Այս հարցին մենք կ զատասիանենք հետեւյալ ձևով. ԽՍՀՄ-ում կրոնը պահպանվում է վորպես անցյալի նացորդ:

Մի բոպե յերեակայենք, վոր ԽՍՀՄ-ում վոչ մի հավատա-

ցյալ մարդ չկա: Հիմա հարց տանք մեզ: ԽՍՀՄ-ում կրոն կառաջնամ, թե չի առաջանա:

Մենք կարծում ենք, վոր վոչ մի նշույլ չենք սխալին, յեթե ասենք, վոր ԽՍՀՄ-ում կրոն չի կարող առաջ գալ: Ենդ իսկապես, ինչ հողի վրա կարող եր սոցիալիզմի յերկրում սաղմանվորվել և զարգանալ հավաա գեպի գերբնական ուժերը: ԽՍՀՄ-ում շահագործող դասակարգեր չկան, հենց այդ պատճառով ել չկանաե հասարակական ձնշումը, իսկ չե վոր կրոնը ձնշված արարածի հառաջանքն ե:

Գուցի սոցիալիստական յերկրի մարդկանց մեջ բնության ձնշումը հավատ առաջացներ գեպի ասավածությունը:

Վոչ, արդակի յենթագրությունը քննադատության չի դիմանում:

Մարդկության արշալույին հասարակության արտադրական ուժերն անսահման թույլ ելին, և բնության տարերքն իշխում եր մարգու վրա, նրան ցած եր թեքում գեպի գետին, իսկ այժմ: Այժմ մարզը յերկրագունդը շրջափակել ե յերկաթուղային սելսերով, ջուրը բաց ե թողել տուրքինների մեջ և մի ակնթարթում ելեկտրականության հսկայական ուժերն ուղարկում ե հարյուրավոր կիլոմետր հեռուները, մեկ կիլոմետր խորությունից նավթ ե դուրս քաշում, դա վերամշակում ե բնագինի և ուրիշ արժեքավոր նյութերի, փայտանյութից կամ ծղոտից պատրաստում և թուղթ, ժամանակակից մարդն իրեն ձիուց ավտոյի վրա յե փոխադրում և հին տենչանքը գորգինքնաթիւի մասին՝ դարձել ե իրականություն, անվարեց թոփչք կատարելով Մասկվայից Ամերիկա աերոպլաններով, վորոնք շատ ավելի ծանր են, քան ողը:

Գիտության և տեխնիկայի այս նվաճումներից շատերը կան նաև կապիտալիստական յերկրներում, բայց այնտեղ նրանք ծառայում են շահագործողներին, այնտեղ լնության ուժերի հաղթահարումն ոգտագործվում ե կապիտալիստների և կալվածատերների ոգտին և ուժեղացնում ե դասակարգային ձնշումը:

ԽՍՀՄ-ում գիտությունն ու տեխնիկան ծառայում են միայն աշխատավորներին. սոցիալիզմի յեր կրում բնությունը չի կարելի թշնամի կամ խորթ մայր անվանել: Վոչ, յերեն բնության ուժերը հարգածում են մեզ, բայց նրանք միայն այն ժամանակակից առաջացավ, ամրող դասակարգեր դադարեցին գոյություն ունենալ, արմատապես փոխվեցին և բանվոր դասակարգը, և գյուղացիությունը, իսկ ԽՍՀՄ-ում դեռ կրոնը կա, և նրանից սոցացող վասար խոշոր ե:

Են հարվածում, յերբ մենք նրանց չենք ուսումնասիրում, վատահելով ինքնահոսին և «գուցե»-ին ու «թերես»-ին: Իսկ յեթե մենք նրանց ուսումնասիրում ենք, այդ դեպքում նրանք դառնում են մեր ոգնականները և նույնիսկ՝ մեր ծառաները:

Հուսիսային թիսում նույնիսկ «Հար» քամին ծառայում է Պապանինի գլխակորությամբ աշխատող մեր նշանավոր չորսին, ոգնելով նրանց ելեկտրական եներգիա ստանալ դրված հողմաշարժից:

Գյուղացիները, ցարական մուսաստանում իրենց վատ ձիով և վատթար գութանիկով վատ հողի վրա աշխատելով, և նետածանրաբենված լինելով ամեն տեսակի վճարումներով՝ հոգուտ կալվածատերների ու կապիտալիստների, և կուլակին ունեցած սոցացիության պարտքերով, վոչինչ չեյին կարողանում անել վոչ մորեխի, վոչ յերաշտի և վոչ ել ուժաթափ յեղած հողի գեմանությունը նամար չար, խորթ մայր եր:

Իսկ ԽՍՀՄ-ում կոլեկտիվացած գյուղացիությունն աշխատում ե գաշտերում ՄՏԿ-ի և գյուղատնտեսների սգնությամբ, ոգտագործելով հոգուտ իրեն հողագիտության նվաճումները, քիմիան, բուսաբանությունը և հաղթահարում և յերաշտի հետևանքները, ձգտում ե բներքահավաքի կարճ ժամկետների և այլն՝ լայնորեն գործադրելով արակտորն ու կոմբայնը:

ԽՍՀՄ-ում աշխատավորներն ավելի ու ավելի յեն ձեռք բերում գիտությունը, բնությունը յենթարկում են իրենց: Բնության տարերային ուժերի հանդեպ յեղած անգորությունն այսուեղ չի կարող գանալ կրոնի առաջացման պատճառ:

ԽՍՀՄ-ում կրոնի գլխավոր արմատները վոչնչացված են, և յեթե ելի շատ մարդիկ հավատում են աստծուն, ապա այդ այնպատճառով, վոր կրոնական իդեոլոգիան չափազանց պահպանողական ե: Ընկեր Ստալինն ընդգծեց այն փաստի նշանակո թյունը, վոր մարդկանց գիտակցությունն իր զարգացմամբ հետ և մնում նրանց փաստական գրությունից: Նոր հասարակությունառաջացավ, ամրող դասակարգեր դադարեցին գոյություն ունենալ, արմատապես փոխվեցին և բանվոր դասակարգը, և գյուղացիությունը, իսկ ԽՍՀՄ-ում դեռ կրոն կա, և նրանից սոցացող վասար խոշոր ե:

Բոլորը գիտեն, թե վորքան ամուր են արմատանում մարդկանց մեջ զա աղան պատկերացումները, վորոնք բազմաթիվ տասնամյակների, իսկ մի քանիսն ել—գարերի ընթացքում են կազմվել:

Մասնավոր սեփականատիրական իդեոլոգիան պահպանողական է: Միայն հեղափոխական դասակարգն ունի հեղափոխական, և վոչ թե ճահճացման իդեոլոգիա:

Կրոնական հայացքներն առանձնապես պահպանողական և ապրող են: Կրոնը խցկլում և մարդկանց գլուխն որորոցից, յերեխի խայբին սովորեցնում են աղոթել մինչեռ նա գեռքայլել անգամ չի կարողանում, յերբ յերեխայբին հայտարարում են, թե բոլոր ըարիքներն աստված և ուղարկում, յերբ ամեն քալվափոխում աստվածային պատժով են սպառնում նրան:

Միաժամանակ պետք են ընդգծել մի շատ կարեոր փաստ, այօինքը՝ զոր կրոնական ընտանիքում յերեխայբին աղոթել են սովորեցնում ամենամոտիկ, ամենաթանգարգին մարդիկ, ինչպես մայրն ու հայրը, պապն ու տատը, մորաքույրերը, քույրերը և այլն:

ԽՍՀՄ-ում կան շատ աղնիվ աշխատավորներ, վորոնք դեռևս չեն աղատվել կրոնական թժրությունից, վորոնք յերեխաներին զաստիրակում են կրոնական վոգով: ԽՍՀՄ-ում կան քահանաներ և աղանդավորական «յեղբայրներ», վորոնք վատ փորձ ձեռք չեն բերել կրոնական զգացումներն ողտագործելու ինսդրում: ԽՍՀՄ-ում կան նախկին կուլտակներ, սպեկուլյանտներ և խորհըրդագային իշխանության ուրիշ թշնամիներ, և նրանք կրոնական հողի վրա լարում են, ում զոր հաջողում են, կոմունիստական կուսակցություն և խորհրդային պետության զեմ:

Հետո, ԽՍՀՄ-ում կան վոչ քիչ լրահսներ, դիվերսանտներ, Փաշիստական վարձկաներ հանձննա տրոցկիստների, աջ հականեղափոխականների և բոլոր այդ սրիկաները՝ ատելով խորհրդագային իշխանությունը և սոցիալիստական պետությունը, հոգուտ Փաշիզմի ոգտագործում են հավատը թե գեղի աստված, և թե գեղի ստանան:

Նույն գես չպիտի մոռանալ, վոր ԽՍՀՄ զեռևա գտնվում ե կապիտալիստական շրջապատման մեջ, վորի մեջ ջարգուփշուր արգած շահագործող դասակարգերի մնացորդներն ուղղակի պաշտամություն են զանում:

Այդ կապիտալիստական շրջապատումը և նրա ազենտուրան յերկրի ներսում սնում և պաշտպանում են սոցիալիզմի թշնամի կրոնական իդեոլոգիան:

Կրոնի գեմ, վորպես շահագործական անցյալի մնացորդի գեմ, պետք ե պայքարել համառորեն և հետևողականորեն, չմոռանալով, վոր դա արմատացած ե վոչ թե անհատների, այլ համեմատաբար մեծ մասսայի զլիսում:

Այդ պայքարը պիտի մենք ագիտացիայի և պրոպագանացիայի և մասսաներին հակակրոնական պատքարի համար կազմակերպելու միջոցով: Հակակրոնական ագիտացիան և պրոպագանան սոցիալիզմի յերկրում տալիս են հսկայական դրական արդյունքներ, վորովհեակ այնտեղ արդեն ճնշվածներ չկան, տարբեցտարի կյանքն ավելի ուրախ և զվարթ և գանձում, համաժողովրդական տնտեսությունն արագ կերպով աճում ե, անգրագիտությունը վերացվում ե, յերիտասարդ սերունդն ամբողջությամբ ստանում ե լայն կրթություն, մարդու առողջության խնամքը բազմապատկվում ե:

Դորձն ունի նաև մի այլ կարեոր կողմ, վորի շնորհիվ մեր անսատվածական աղիտացիան տալիս ե լավ պտուղներ. մենք ինկատի ունենք կոռպերացիան իր բոլոր ձևերով, և ամենից առաջ կողեկտիվացումը:

Ենր վոր հավատացյալ մարդն ընկնում և առանձնահատուկ դժվարին պայմանների մեջ, նա փնտռում և հենարան, նա ուզում և ոզնությունն ստանալ:

Այդ ոզնությունը նա կարող է ստանալ ուրիշ մարդկանցից, պետությունից, կուսակցությունից, կոռպերացիայից, պրոֆերությունից, փոխադարձ ոզնության կոմիտեյից:

Բայց յերբ հենց այլպիսի բնական, նյութական ոժանդակություն ստանալն անհնար ե, հավատացյալ մարդը ծունկ և չուքում որբապատկերի առաջ. բնական ոժանդակության բացակայության պատճառով նա փնտռում է զերբնական ոժանդակություն: Նա ձգտում է աստծուն, վորպես հենարանի, հենց այս պատճառով, վոր ինքն իր վրա արգեն հույս չի դնում, կարծես թե ինքն իրեն կորցնում ե, վոր իր ընկերների, բարեկամների, վորեւ կազմակերպության վրա նույնպես հույս չի դնում:

«Սոցիալիզմ և կրոն» հոդվածում լենինը խոսում է միայնակության մասին, վորպես կրոնականության մի պատճառի և դա ամբողջությամբ համապատասխանում է Մարքսի մտքին. «Կրոնը մարդու ինքնանահաշումն ու ինքնազգացումն եւ, վորը կամ իրեն գեռ չի գտել, կամ արդեն նորից կորցրել եւ իրեն»\*)»

Յեվ իսկապես, չեղ վոր բուրժուական հասարակության մեջ ամենակըռնական դասակարգը մանր սեփականատերերի դասակարգն եւ հանդիսան ում: Քահանաներն ում մեջ ափելի շատ մեծարողներ ունեն: Մանր և միջտկ զյուլցայիների մեջ, տնայնագործների և արենատավորների, մանր խանութպանների մեջ:

Նրանք մանր ապրանք-արտադրողներ են և հարկադրված  
են խոշոր ապրանք-արտադրողների—կալվածատերերի, կուլակ-  
ների, կապիտալիստների, ֆաբրիկանտների, խոշոր առևտրական-  
ների գրոհին դիմանալ: Նրանք այս գրոհին դիմանալ չեն կա-  
րողանում և վերջիկերջո զառնում են կապիտալիստների դռները՝  
վաղվա որվա համար նրանք վոչ մի վստահություն չունեն-  
վաղվա որվա համար՝ մանր տնտեսատերերը շարունակ տագ-  
նապի մեջ են: Մի անընդունակ տարի—և ահա աշխատավորը զառ-  
նում և կուլակի ստրուկը: Զին սատկեց—և ահա մանր կամ մի-  
ջակ դյուլացու գրությունն անելանելի յէ:

Ահա այսպիսի գեպքերում մանր տնտեսատերն իրեն կորած և համարում։ Յեթի նրա ձին ստակեց, հաջը և առաջ գալիս, ինչ միջոցներով նա կարող է նոր ձի գնել։ Նա այդ միջոցները չունի։

Գուցե նրան պետությունը կողնի: Առչ, կապիտալիստական  
պետությունը նրան չի ոգնի:

Գուցե գյուղացուն վորև ողնություն ցույց կտա մանք սեփականատերերի դասակարգը։ Վոչ, նա հիմք չունի սրա վրա ևս հույս զնելու։ Մանր սեփականատերերը միաձուլված, միացոծ չեն։ Մանր սեփականատերն իր դասակարգի վրա հույս դնել չի կարող, իսկ իր վրա առավել ես, վորովհետեւ մի ծագկով գարուն չի գա, — և ահա տուժած մենավորն շտապում ե հրաշագործ սրբա-

\*) *Մարքս-Իրավունքի հեղեղացան փելիստիայության քննադատությունը* Յերևան, Համար I, էջ 399:

պատկերների, սրբերի և զանազան մասնագիտությունների աստվածների մոտ:

Սոցիալական միայնակությունը կրոնի համար չափազանց բարեհաջող հող է:

Ամենաանաստված գասակարդը մարդկային գոյության ամ-  
բողջ ժամանակաշրջանում, այդ—պրոլետարիատն եւ Բայց չե-  
զոր մեզ լավ հայտնի ին, վոր այդ գասակարգն ամենաամբողջա-  
կանը, ամենամիաձույն եւ, վոր բանվոր գասակարգի մեջ եւ իս-  
կական ճշմարտությամբ հնչում ենտելյալ լողունգը, —բոլորը մեկի  
համար և մեկը բոլորի համար:

Բանգվարկերը կենտրոնացած են Փաբրիկաներում և գործառնութերում, շախտերում և հանքերում, հարյուրավոր են հազարավոր մարդով մեկ ձեռնարկության մեջ: Նրանք միացած են աշխատանքի և կյանքի ընդհանուր պայմաններով: Կապիտալիստական լերկրներում նրանք միացած են ընդհանուր պայքարով կտպիտալիստների գետ:

Բանվորին չի կարելի դասել սոցիալապես միայնակների կարգը։ Յեթև կապիտալիստական ձեռնարկության մեջ բանվորն ընկնում ե շատ վատ գրության մեջ, որինակ, բռնվում ե վտանգավոր հիվանդությամբ, նրա ցեխում աշխատող ընկերներն այսպես թե այնպես առաջին ոգնությունը ցույց կտան, ոգնության կգա նաև պրոլետարական հեղափոխական կազմակերպությունը։

Բանվորը հույս և գնում այս աշխացության վրա, և նրա  
մաքերը հազվադեպ են ուղղվում աստծու կողմբ։ Իսկ մանր սե-  
փականատերը պետք և հույսը դնի միայն իր վրա, բայց վորով-  
հատե նրա ուժերը առաջինքն վոչինչ են հանդեպ այնպիսի  
մրցակիցների, վորոնք ամենաին չկիտեն մարդկանց խնայել, ինչ-  
պես կուլակը, կալվածատերը, Փարքիկանատը, վաճառականը, բան-  
կիրը, ապա ուրեմն նու գիտակցելով իր անզորությունն ու միայ-  
նակությունը, իրեն նետում և տեր-աստծու թաթերի առաջ։

ԽԱՀՄ-ում էինինի կոռպերատիվային պլանը կյանքում կհստագործվել և ըստիւ Ստալինի ղեկավարությամբ:

Համկ(բ)կ ԽՎ համագումարը տվեց գյուղի սոցիալիստական մերակառուցման դիրեկտիվ ամենից առաջ կողեւախվացման մի-

Հայով, այսինքն՝ գյուղատնտեսական սբառդրանքի կոոպերացումով:

1937 թ. գրեթե ամբողջ գյուղացիությունը, բացի մի քանի տոկոս տնտեսություններից, արդեն կոլեկտիվացած են:

Միայնակությունը գյուղացիության միջից ընդմիշտ՝ պետականապես և անդառնախորեն վերացված են:

Կոլեկտիվացումը միացրեց մինատնտեսների անջատովածութերը և վոչնչացրեց հասարակական միայնակությունը:

Կոլտնտեսականը հանձինս յուր կոլտնտեսության ունի բնական հենարան: Կոլտնտեսականը չի կարող գործազրկությունից կորչել, վորովհետեւ սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում լույսին վոչնչացրեց գործազրկությունը: Կոլտնտեսականը չի կարող ազգատանալ, վորովհետեւ սոցիալիստական սիստեմը վոչնչացրեց ազգատության աղբյուրները:

Կրօնը—ասում ե լենինը,—առաջանում ե ձեշման և միայնակության հետեանքով:

Սոցիալիզմի յերկրում չկան վճռ ձնշում, վճռ ել միայնակություն: ԽՍՀՄ-ում կրօնն իր գոյությունը պահպանում է միայն վորպես մնացորդ, բայց զնաւակար մնացորդ, վորը խանգարում և աշխատավորներին լինել լիսրժեք մարտիկներ սոցիալիզմի հետագա հաղթանակների համար:

Բուրժուական իշխանության ժամանակ կրօնն ուժեղ և այնպես, քան յերբեք, վորովհետեւ հարյուրավոր միլիոն մարդիկ կըված են կապիտալիստական շահագործման բեռան տակ: Բայց արդեն կապիտալիստական յերկրներում ապրում ե պայքարում և մի գասակարդ, վորը վստահ և իր ուժերին, վորը համոզված ե, վոր ինքը կհաղթի: Այդ դասակարգի մարդիկ—զանազան յերկրների սլրողետարները հույս չեն դնում վճռ աստծու, վճռ հերոսի, և վճռ ել վորեն հրաշքի վրա, այլ միայն իրենց վրա, իրենց դասակարգային համերաշխության և կողմանկերպվածության վրա: Նրանք հույս են դնում իրենց դասակարգային կամքի և իրենց զիտակցության վրա, իրենց ընդունակակության վրա՝ հեղափոխական պայքարի ճանապարհին հարյուրավոր միլիոն մանք սեփականատերերի ներգրավելուն, վորոնք նույնպես տքնում են կապիտալիզմի և ֆեոդալիզմի լծի տակ: Այս դասակարգի առա-

ջավոր մասի մարդիկ, այսինքն՝ հեղափոխական պրոլետարները, վիչ մի աստված չեն ճանաչում: Նրանք—անաստվածներ են, նրանք չեն խոնարհում և վոչ մի տեսակ գովարության առաջ, այլ, ընդհակառակը, աշխատում են միահամուռ ուժերով հաղթահարել նրանց:

Կապիտալիստու կան յերկրների բանվորներն իրենց կողման ներգրավում մանր սեփականատերերին, չքավորներին, նրանց քաշում են հեղափոխական պայքարի մեջ:

Իսկ յերբ հեղափոխական բանվորները, չքավորագույն գյուղացիության հետ միասին, կապիտալիստական բուրժուազիայի ձեռքից խլում են իշխանությունը, նրանք անջատում են յեկեղեցին պետությունից, գարուցը՝ յեկեղեցաւց, քահանաներին դըքակում են իրենց արտոնյալ զրությունից և ծագալում են հակովնական լայն ագիտացիա և պրոպագանդա: Նրանք գիտեն, վոր կրօնական մնացորդները կղուաքար են, կազած աշխատավորների վոտքերին, վորը խանգարում ե նրանց բանվոր դասակարգի ավանդարդի հետ համաքայլ ընթանալ նույն ուղիով գեղի կօմունիզմը:

\* \*

Խոսերվ կրօնի մտաին, վորպես ժողովրդի ոգիումի մտաին, մենք պիտի գործի մի այլ կողմն ել շշափննք, վորի եյությունը հետեւյալումն ե: Հավատը գեղի աստված սնվում և մի աղբյուրով ես: Դա տարերայնությունն ե, կապիտալիստական տնտեսության անպահանայնությունը: Կապիտալիստական յերկրներում իշխանությունը բուրժուազիայի ձեռքումն ե, վորը բոլոր ուժեւությունը հոգի, նրա ընդիրքի, գործարանների, յերբով պաշտպանում և հոգի, նրա ընդիրքի, գործարանների, յերբով կաթուղիների և այլնի մասնավոր սեփականության իրավունքը:

Կապիտալիստական արտադրության սիրտեմն անխուսափելիորեն հասցնում է այս դասակարգի կողմում կուտակվում են ահազին հարստություններ, մյուս կողմում աճում են կարիքն ու աղքատությունը,

Աշխատանքի և կապիտալի միջև յեղած անհաշտելի հակառակությունները, տարերայնությունը, անպահանայնությունն անխղիքերին կապված են կապիտալիստական տնտեսության ամ-

բողջ սիսաեմի նետ և կարող են վոչնչանալ միայն կապիտալիզմի հետ միասին: Անինը, խոսելով կրօնի սոցիալական արժանահերթ մասին, գրում եր. «Յերկյուղ կապիտալի կույր ուժի առաջ, վորը կույր ե, վորովնեաւե ժողովրդական մասսաների կողմից չե կարող կանխատեսվել, վորը պրոլետարի և մանրիկ տնտեսատիրոջ կյանքի ամեն մի քայլափոխին սպառնում ե բերել նրան և բերում ե «հանկարծակի», «չսպասված», «պատահական» քայլայում, կործանում, աղքատացում, պառաւերացում, պռոնկություն, քաղցած մահամահ ժամանակակից կրօնի այն արժատը, վորն ամենից առաջ և ամենից շատ մատերիալիստը պիտի ի նկատի ունենա, յեթե նա չի ցանկանում նախապատրաստական գասարանի մատերիալիստ մատլա\*):

Կապիտալիստական տարերքը, այս բանում վոչ մի կասկած չկա, հանդիսանում է հարուստ աղբյուր, վորը սնում և բոլոր նրանց կրօնական զգացումները, ովքեր գանում են այդ տարերքի զոհը:

ԽՍՀՄ-ում կրօնի այդ աղբյուրը գոյություն չունի: Արտադրության բոլոր հիմնական միջոցները պատկանում են հիմա պետության ու կոռպերացիային (նույն թվում և ամենից առաջ կոլտնահսություններին), միանձնյա տնտեսություններ բեչ են մասնաւություններին), ամենամեծ անում և ամեն բան, ինչ վոր կարող ե, միայն թե ոգնի նրանց ջուռով և հաստատալես կանգնել կոլեկտիվացման ճանապարհին:

ԽՍՀՄ-ում ամբողջ տնտեսական կյանքն ավելի ու ավելի կառուցվում և միասնական պլանով, վորը մահացու հարվածներ և հասցնում ամեն տեսակի «գուցեաներին ու «թերես» ներին:

ԽՍՀՄ Սահմանադրության 11-րդ հոդվածում նշված ե. «ԽՍՀՄ-ի տնտեսական կյանքը վորոշում և նրան ուղղություն և տափապետական ժողովրդատնտեսական պլանը՝ հոգուտ հանրային հարաբետության ավելացման, աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման, ԽՍՀՄ-ի անկախության ամրացման և նրա պաշտպանումնակության ուժեղացման»:

Տրոցկիստները և բուժաբինականները գուրս եյին գալիս պետական պլանների գեմ, վոր կազմված եյին կոմունիստական

\* Անին—Բանվարական կուսակցության վերաբերմունքը գեղեց կրօնը: Յերկ, հառ. ԽՄ, հջ 71:

կուսակցության գիրեկտիվերով: Դիվերսանտները և տեռորիստները, արոցկիստներն ու բուժաբինականները, ժողովրդի այդ անարդ թշնամիները, հաղթանակած սոցիալիզմի յերկրի թշնամիները, կատարելով իրենց փաշխտ տերերի կամքը՝ հանձինս ձիտլերների և Գյորինգների, անդրդիվելորեն կանգնել եյին գեղի հինը վերադառնալու, գեղի կապիտալիստական իրավակարգի կողմը, նրանք մեր յերկրը քաշում եյին գեղի տարերքը, գեղի մասնավոր սեփականատիրական հարաբերությունները, գեղի այն, վորը միշտ կրօնին պաշտպանել և վորի համար մինչեւ ամենավերջին ժամանակը պայքարում ե ամեն մի կրօն—կաթոլիկականն ու հրեականը, ուղղափառն ու մահմեղականը, բուդդայականը և ամեն մի աղանդավորականը:

Պայքարելով պրոլետարական գիկտատուրայի ամրապնդման համար, մեր յերկրի աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ վոչնչացնում են սոցիալիզմի բոլոր թշնամիներին, իրենց մեջ ամրապնդելով հավատ՝ զեղի իրենց սեփական ուժերը և ել ավելի յեն համոզվում այն բանում, վոր սոցիալիզմի յերկրում՝ ժողովուրդն ե յենթագրում, նա ինքն ել տնորինում ե:

Եել այսպես, բոլոր տրմատական պատճառները, վորոնք առաջացնում են կրօնը և նրան սնունդ են տալիս, ԽՍՀՄ-ում վերացված են:

ԽՍՀՄ-ում չկան շահագործող դասակարգեր և շահագործում:

ԽՍՀՄ-ում չկա մի ազգի բոնություն մյոււի վրա:

ԽՍՀՄ-ում չկա կանանց իրավագրկություն և ձնշում:

ԽՍՀՄ-ում չկա գործազրկություն և աղքատություն: Դրա փոխարեն, մեզ մոտ կա 170 միլիոնանոց ազգաբնակչություն աշխատավորների կյանքի նյութական և նոգեկան մակարդակի տաճ, վոր տարեցտարի մեծանում ե:

ԽՍՀՄ-ում չկա տարերքի տիրապետություն, այլ հաղթանակում և պետական միասնական պլանը:

ԽՍՀՄ-ում չկա սոցիալական (հասարակական) միայնակություն և կենինի կոոպերատիվային պլանն իրականացվում է ընկեր Ստալինի հանճարեղ զեկավարությամբ:

Բայց քիչ ե կրօնի սոցիալական տրմատները վոչնչացնելը:

Անհրաժեշտ և մեր ամբողջ ժողովությը դաստիարակելու կօմուն-  
սիզմի և մարտնչող անսաստվածության վոգով:

ԽՍՀՄ-ում կուլտուրական ֆրոնտում նշանակալից աշխա-  
տանք և յեռում: 1936-37 ուս. տարում տարրական և միջնակարգ  
պարունակում սովորում եր 28,8 միլիոն յերեխա, նույն  
առրին ԲՈՒՀ-երում սովորում եր 542000 մարդ: Սովորողների  
թվով մեր յերկիրն աշխարհում բռնում և առաջին աեղք Բաց-  
գում են նոր գրադարաններ, վորոնք 1936 թ. հասան 55,900 ի,  
1942 թվի 32500-ի գիմաց:

Նույն աղջ 4 տարվա ընթացքում ակումբների և խրճիթ-  
ընթերցարանների թիվը 49300-ից բարձրացավ 80946-ի:

Սակայն կապիտալիզմի մնացորդները շատ աշխատավորնե-  
րի կինդապի և գիտակցության մեջ գեռաս չեն հաղթահարված: Դեռ  
և մեծ աշխատանք անենք կատարելու աշխատավորների սո-  
ցիալիստական վերադաստիարակման գործում, այս աշխատանքն  
առանձնահատուկ նշանակություն և ստանում Խորհուրդների  
առաջիկա ընտրությունների կապակցությում:

Մեզ մոտ շահ սգործող դասակարգեր չկան. նրանք վերացված  
են Բայց ԽՍՀՄ-ում կան կուլտակաթափ արված կուլտուրի, ամեն  
անսակի անցյալի մարդիկ, վորոնք գուն սվորվել են և թագցը-  
նում են իրենց անեցած ատելությունը՝ դեպի սոցիալիզմի գործը:

Այս մարդիկ կ անեն ամեն բան, ինչ վոր կարող են, վոր-  
պես ի քաղաքականապես հետամնաց մարդկանց քվերկությամբ  
իրենք թափանցեն Խորհուրդների մեջ կամ խցկեն այսուղ իրենց  
հավատարիմ թեկնածուներին:

ԽՍՀՄ մեջ բողժանադար քահանաներ, սարկավագներ, յե-  
կեղեցական հսկիչներ, մոլասներ, ռաբբիներ, կանձններ (կաթո-  
լիկ քահանաներ), ավտոարանական յեղայրներ և բավտիստներ  
են ապրում. նրանք բոլորն առեւտուր են անում հոգեոր ողիով,  
ոպիումով—կրոնով:

Իրենց ամբողջ ևթյամբ նրանք միշտ և ամենուրեք պայ-  
քարել են շահագործող մասսաների հեղափոխական շարժման  
գիմ, կուլակության հետ միասին մասնակցել են խորհրդային  
իշխանության դեմ կազմակերպած զավադրություններին, զսա-  
մել են կ լիսողներին, համոդիկ են չժանել կոլխոզները գործ չու-  
նինալ ՍՏԿ-ների հետ և այն, և այն:

Ենկեղեցական և աղանգավայշական աղիտաառների և կող-  
մակերպիչների բոլոր այս հաղարներն ու տասնյակ հազարները,  
վորոնց ձայնը զերես ունկընդրում են բանվորական և գյուղա-  
ցիական ընտանիքների քաղաքականապես հետամնաց անդամնե-  
րը, հիանալի գիտեն, վոր կրոնը—թըմբիր և, ժողովրդի ոպիումն  
ե, և նրանք այս ոպիումը տարածում են յերկրում ողտվելով  
ամեն մի առիթից. և յերեխաներէ ծննդից, և թանգագինների,  
մերձավորների մահվանից, և այլն Յեկեղեցիների հովանու և  
աղանգավորական աղոթատների հարկի տակ ապաստարան են  
գտել համաշխարհային ֆաշիզմի գործակալները, վորոնք մեր  
կյանքի բոլոր բնակավառներում վասարարություն են կազմա-  
կերպում. լրաւեներն զբաղվում են տեսորիստական գործունեյու-  
թյամբ սոցիալիստական յերկրի լավագույն մարդկանց դեմ:  
Վոր Փաշիզմի գործակալները ԽՍՀՄ-ի հավատացյալ աշխատա-  
վորների կրոնականությունն ամեն կերպ ոգտագործում են ոռ-  
ցիալիզմի, Խորհուրդների և կոմունիստական կուսակցության  
գիմ, այս մասին վկայում են բազմաթիվ փաստեր: Ժողովրդի  
թշնամիները, վասարար տրոցկիստներն ու բուխարինականները,  
վորպեսզի սոցիալիստական շինարարությունն իր կարևորագույն  
մասներում ի ավանեն, զործագրում են ամենանողկալի միջոցնե-  
րը, հաճախ ամեն գույնի յեկեղեցականների հետ միացած գոր-  
ծելով:

Ավելի շատ հեղափոխական զգոնությունն Աշխատավորների  
մեծ ուսուցիչ կարլ Մարքսն ասում եր. «Կրոնի՝ վորպես ֆողո-  
վերգի խարուսիկ յերջանկության վոչչացումը, նրա իրական  
յերջանկության պահանջն ե»<sup>1)</sup>:

Այս իրական յերջանկությունն աշխատավորները լինինի—  
Ստալինի կոմունիստական կուսակցության զեկավարությամբ  
նվազել են մեր յերկրում՝ շահագործողների, կապիտալի գիմ  
մղած հեղափոխական պայքարում:

Ըսկեր Ստալինը Խորհուրդների VII Արտակարգ Համագու-  
մարում Սահմանադրության նախագծի մասին արտասահմած իր  
հառի մեջ այսպես խոսեց հաղթանակած սոցիալիզմի յերկրի Սահ-  
մանադրության մասին. «Թա կը լինի մի պատմական փաստա-

1) Կ. Մարքս—իրավունքի հեգելյան փիլիսոփայության քննադատու-  
թյունը: Եկրկ. հատ. I, էջ 399.

թուղթ, վորը պարզ ու սեղմ, համարյա արձանագրական վոճակ,  
կը խոսի ԽՍՀՄ-ում սոցիալիզմի տարած հաղթության փառ-  
տերի մասին, կապիտալիստական ստրկությունից ԽՍՀՄ-ի աշ-  
խատավորների ազատազրման փառտերի մասին, ԽՍՀՄ-ում ծա-  
վալուն, մինչև վերջը հետևողական դեմոկրատիայի հաղթու-  
թյան փառտերի մասին:

Դա կը լինի մի փաստաթուղթ, վորը կը վկայի, թե ոյն,  
ինչի մասին յերազել են և շարունակում են յերազել միլիոնա-  
վոր ազնիվ մարդիկ կապիտալիստական յերկրներում, — արդեւ  
երականացվել ե ԽՍՀՄ-ում (1):

Մեր սոցիալիստական հայրենիքի 170 միլիոնանոց հպար-  
ժողովուրդը վոչնչացնելով կապիտալիզմը, շպրտում է իր վրա-  
յից նուև կրոնի — աշխատավորների հոգեոր ճնշման գործիքի շրջ-  
բաները:

(1) Ի. Վ. Ստալին՝ Զեկուցում ԽՍՀ, Սիության Սահմանադրության նա-  
խագծի մասին: Կուսերատ, 1936, եջ 50.

ԳԻՆԸ 40 ԿՈՎ.

ВЛ. САРАБЬЯНОВ

Религия—опиум народа

ГИЗ АРМ. ССР